ՀՀ ԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԹԱՐԳՄԱՆՉԻ ԵՎ ՍՈՒՐԴՈԹԱՐԳՄԱՆՉԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԹԾՁԲ-24/1-1

ք. Երևան «04» «12» 2023թ.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունն՝ ի դեմս ծառայության գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Կամո Ամիրխանյանի, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ն՝ ի դեմս տնօրեն Արթուր Խաչատրյանի (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 22-ի «Պետական միջոցների հաշվին թարգմանչի, սուրդոթարգմանչի և տեսողական սահմանափակումների պատճառով հաշմանդամություն ունեցող անձի օգնականի ծառայություններ մատուցող անձին նշանակելու կարգը, նրա վարձատրության չափը և կարգը սահմանելու մասին» N 1334-Ն որոշմամբ սահմանված պահանջներով, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է թարգմանչի և սուրդոթարգմանչի ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջների:

1.2 Կատարողը Ծառայությունը մատուցում է Պատվիրատուին կամ նրա կողմից որոշված Ստացողին սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրին համապատասխան՝ սույն պայմանագրով նախատեսված ծավալներով, ձևով և Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետներում, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող կամ անպատշաճ որակի Ծառայություն.

Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Սույն պայմանագրի շրջանակներում ստացված տեղեկությունները չփոխանցել երրորդ անձանց և պահպանել գաղտնիություն:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի արդյունք է հանդիսանում քրեակատարողական հիմնարկին հանձնված գրավոր (էլեկտրոնային և թղթային), բանավոր թարգմանությունը, ինչպես նաև սուրդոթարգմանչի ծառայության մատուցումը:

3.2 Թարգմանչի (օգնական) և քրեակատարողական ծառայողի միջև հաստատվում է հավաստագիր համաձայն Հավելված 2-ի:

3.3 Կատարողի կողմից հաստատված հավաստագրերը և հանձնման-ընդունման արձանագրությունը (Հավելված 3) ներկայացվում են համապատասխան քրեակատարողական հիմնարկի պետին: Կատարողի և քրեակատարողական հիմնարկի պետի կողմից հանձնման-ընդունման արձանագրության հաստատումը հանդիսանում է ծառայությունների կամ դրա մի մասի պատշաճ մատուցված լինելու հավաստում:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ԴՐԱ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Պայմանագրի գինը, ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում փոխադրման, հարկերի, տուրքերի, այլ վճարումների գծով ծախսերը: Ծառայության միավորի արժեքները սահմանված են Հավելված 1-ում:

4.1.1 Կատարողը պատվիրատուին է ներկայացնում հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունները, հավաստագրերը, թարգմանչին ներգրավվելու վերաբերյալ քրեակատարողական հիմնարկի պետի, ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի պատասխանատու աշխատակցի կամ նրան փոխարինող անձի հայտերը և հաշվարկային փաստաթղթերը (այսուհետ՝ Փաթեթ):

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝

դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է Փաթեթի հիման վրա (եթե Փաթեթը Պատվիրատուն ստանում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ 20000 ՀՀ դրամի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ 10000 ՀՀ դրամի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում 2023թ.-ի դեկտեմբերի 26-ից: Պայմանագիրը գործում է մինչև 2024 թվականի դեկտեմբերի 25-ը ներառյալ:

7.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել Կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի Կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման Կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.3 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ Կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի Կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.4 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.5 Սույն պայմանագիրը կազմված է **9** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր Կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.6 Սույն պայմանագրից ծագած Կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան Կողմի գրավոր համաձայնության:

7.7 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ օրենսդրությունը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն	«ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ
Ք. Երևան, Արշակունյաց-63	**ք. Երևան, Դ. Անհաղթի 19/1-70**
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	**«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ**
Հ/Հ 900011175016	**Հ/Հ 163288639103**
ՀՎՀՀ 02204739	**ՀՎՀՀ 01006813**
ՔԿ ծառայության	**Տնօրեն՝ Ա. Խաչատրյան**
գլխավոր քարտուղարի Պ/Կ	
Կ. Ամիրխանյան	
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1
« 04 » « 12 » 2023 թ. կնքված
Թիվ ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԹԾՁԲ-24/1-1 պայմանագրի

Ծառայության նկարագիր, միավորի արժեք

Հ/հ	Ծառայության անվանում	Միավորի արժեք, ներառյալ ԱԱՀ, ՀՀ դրամով	
		Գրավոր (1 էջ՝ 1800 նիշ)	Բանավոր (1 ժամ)
3	Թարգմանություն՝ *հայերենից գերմաներեն, գերմաներենից հայերեն (բանավոր և գրավոր)*	3990	12000
4	Թարգմանություն՝ *հայերենից թուրքերեն, թուրքերենից հայերեն (բանավոր և գրավոր)*	3990	12000
7	Թարգմանություն՝ *հայերենից հունարեն, հունարենից հայերեն (բանավոր և գրավոր)*	7200	12000
16	Թարգմանություն՝ *հայերենից չեխերեն, չեխերենից հայերեն (բանավոր և գրավոր)*	12000	15000
19	Թարգմանություն՝ *հայերենից ճապոներեն, ճապոներենից հայերեն (բանավոր և գրավոր)*	14400	18000
22	Թարգմանություն՝ *հայերենից շվեդերեն, շվեդերենից հայերեն (բանավոր և գրավոր)*	18000	20400
23	Թարգմանություն՝ *հայերենից սլովեներեն, սլովեներենից հայերեն (բանավոր և գրավոր)*	18000	18000
25	Թարգմանություն՝ *հայերենից փանջաբի, փանջաբիից հայերեն (բանավոր և գրավոր)*	14400	18000
27	Թարգմանություն՝ *հայերենից սլովակերեն, սլովակերենից հայերեն (բանավոր և գրավոր)*	10800	12000
28	Թարգմանություն՝ *հայերենից լիտվերեն, լիտվերենից հայերեն (բանավոր և գրավոր)*	15000	18000
30	Թարգմանություն՝ *հայերենից ուզբեկերեն, ուզբեկերենից հայերեն (բանավոր և գրավոր)*	14400	15000
31	Թարգմանություն՝ *հայերենից եբրայերեն, եբրայերենից հայերեն (բանավորև գրավոր)*	15000	18000

Կատարողի կողմից Հայաստանի Հանրապետության քրեակատարողական հիմնարկներում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների համար կատարվելու են ոչ բարդ, միջին բարդության, միջին բարդության մասնագիտական, բարդ, բարդ մասնագիտական գրավոր և բանավոր (նաև առցանց եղանակով) թարգմանություններ 24 ժամ/7 օր աշխատանքային ռեժիմով (նաև հանգստյան և տոնական օրերին, առանց բացառության) Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական բոլոր հիմնարկներում: Միևնույն լեզվով կարող է միաժամանակ թարգմանչի անհրաժեշտություն առաջանալ Երևան քաղաքում և Հայաստանի Հանրապետության տարբեր վայրերում: Թարգմանություն կատարող ֆիզիկական, իսկ կազմակերպությունների դեպքում՝ կազմակերպության աշխատակից հանդիսացող, համապատասխան փաստաթղթեր ներկայացրած թարգմանիչը ծառայությունների մատուցմանը ներգրավվելու է քրեակատարողական հիմնարկի պետի կամ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի ստորաբաժանման պետի կամ նրանց փոխարինող անձի հայտով, որով նրան, ի թիվս այլնի, տեղեկացվելու է ակնհայտորեն սուտ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված քրեական պատասխանատվության մասին:

Բանավոր թարգմանությունը որպես կանոն իրականացվում է առցանց եղանակով, որի դեպքում քրեակատարողական հիմնարկի պետը կամ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի ստորաբաժանման պետը կամ նրանց փոխարինող անձը, անհրաժեշտ գործողությունները սկսելուց առնվազն 2 ժամ առաջ, հայտ (այսուհետ նաև՝ Հայտ) է ներկայացնում Թարգմանչական ծառայություններ կատարողին, որն էլ այն ստանալուց հետո Հայտով սահմանված ժամին առցանց եղանակով կապ է հաստատում համապատասխան քրեակատարողական ծառայողի հետ: Բանավոր Թարգմանչական ծառայություններն իրականացվելու են Viber, WhatsApp կամ տեսազանգի հնարավորությամբ այլ հաղորդակցման միջոցների օգնությամբ: Բացառիկ անհրաժեշտության դեպքում Թարգմանչական ծառայություններ կատարողն Հայտով սահմանված ժամին և նախատեսված վայրում ապահովում է թարգմանիչների ֆիզիկական ներկայությունը:

Բանավոր թարգմանության ժամանակահատվածը հաշվարկվում է թարգմանչական գործողությունները սկսելու պահից մինչև դրա ավարտը: Ընդ որում, եթե Թարգմանչական ծառայությունների համար ծախսված ժամաքանակի մեջ առկա է մի հատված, որը գերազանցում է 30 րոպեն, բայց պակասում է մեկ ժամից, ապա ժամաքանակի այդ հատվածը հավասարեցվում է մեկ ժամի, իսկ եթե ժամաքանակի մասը չի գերազանցում 30 րոպեն, ապա այդ հատվածը հավասարեցվում է կես ժամի:

Գրավոր թարգմանության դեպքում քրեակատարողական հիմնարկի կամ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի ստորաբաժանման պետը կամ նրանց փոխարինող անձը թարգմանվող տեքստը հանձնում է թարգմանչին: Թարգմանիչը տեքստը ստանալու օրվանից՝ Հայտով սահմանված ժամկետում կատարում է թարգմանությունը և քրեակատարողական հիմնարկին է ներկայացնում իր կողմից հաստատված թարգմանված տեքստը՝ թղթային տարբերակով:

Ելնելով քրեակատարողական ծառայության գործունեության առանձնահատկությունից, ինչպես նաև աշխատանքների արդյունավետ կազմակերպման նպատակով՝ առաջարկը պետք է ներառի բանավոր և գրավոր լեզուներ, ինչպես նաև միևնույն ժամանակ մի քանի վայրում (հնարավոր է՝ մի քանի մարզերում) միևնույն լեզվով տարբեր թարգմանիչներ ապահովելու հնարավորություն:

Կատարողը պարտավոր է յուրաքանչյուր դեպքում թարգմանված նյութը տրամադրել 1-4 էջը՝ 1, 5-10 էջը՝ 2, 11-25 էջը՝ 3, 25 էջը գերազանցողը՝ 4 օր ժամկետում, եթե պատվիրատուի կողմից այլ (ավելի սեղմ կամ ավելի երկար) ժամկետ սահմանված չէ, 2 օրինակից, պատվիրատուի կողմից սահմանված վայրերում, իսկ անհրաժեշտության դեպքում նաև նյութերը տեղում կարվում են բնօրինակների հետ: Թարգմանված նյութը ներկայացվում է A-4 ձևաչափով, տառաչափը՝ 12, միջտողային միջակայքը՝ 1.5, էջերի լուսանցքները՝ վերևից և ներքևից 20 մմ, աջից 15 մմ և ձախից 30մմ: Ընդ որում եթե թարգմանության մեջ առկա է մի հատված, որը գերազանցում է կես թարգմանչական էջը, բայց պակասում է մեկ թարգմանչական էջից, ապա այն հավասարեցվում է մեկ թարգմանչական էջի, իսկ եթե թարգմանության մի հատվածը պակաս է կես թարգմանչական էջից, ապա այդ հատվածը հավասարեցվում է կես թարգմանչական էջի: Թարգմանչական էջ է համարվում 1800 նիշ բացատով էջը, բացառությամբ չինարեն, կորեերեն, ճապոներեն լեզուների:

Յուրաքանչյուր անգամ Թարգմանչական ծառայությունների մատուցման վերաբերյալ կազմվում է հավաստագիր, որի օրինակելի ձևը ներկայացված է կից **N3 հավելվածով:**

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի և ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների անվանացանկ

N	ՔԿ հիմնարկների անվանումը	Գտնվելու վայրը (հասցեն)
1	ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմին	ք.Երևան Արշակունյաց 63
2	ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ	ք.Երևան Արշակունյաց 2
3	ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ	ք.Երևան, Նուբարաշենի խճուղի 2
4	ՀՀ ԱՆ «Վարդաշեն» ՔԿՀ	ք.Երևան, Նուբարաշենի խճուղի 7
5	ՀՀ ԱՆ «Երևան-Կենտրոն» ՔԿՀ	ք.Երևան, Նալբանդյան 104
6	ՀՀ ԱՆ «Աբովյան» ՔԿՀ	Կոտայքի մարզ, ք.Աբովյան 2-րդ արդյունաբերական թաղ, թիվ 30/1
7	ՀՀ ԱՆ «Սևան» ՔԿՀ	Կոտայքի մարզ, ք. Հրազդան
8	ՀՀ ԱՆ «Արթիկ» ՔԿՀ	Շիրակի մարզ Հառիճ համայնք
9	ՀՀ ԱՆ «Վանաձոր» ՔԿՀ	Լոռու մարզ ք. Վանաձոր, Տավրոսի 20
10	ՀՀ ԱՆ «Գորիս» ՔԿՀ	Սյունիքի մարզ ք.Գորիս, Նարեկացու 5
11	ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ	Արմավ մ. ք. Էջմիածին, Էջմիածին- Չորանքարա խճուղի թիվ 23.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
Ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739

ՔԿ ծառայության
գլխավոր քարտուղարի Պ/Կ
Կ. Ամիրխանյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ
ք. Երևան, Դ. Անհաղթի 19/1-70
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163288639103
ՀՎՀՀ 01006813
Տնօրեն՝ Ա. Խաչատրյան

(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված 2
« 04 » « 12 » 2023 թ. կնքված
Թիվ ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԹԾՁԲ-24/1-1 պայմանագրի

ՀԱՎԱՍՏԱԳԻՐ

Թարգմանչական ծառայություններ մատուցելու վերաբերյալ

«____» «_____» 20 թ.

Ստորաբաժանման անվանումը՝ ՀՀ ԱՆ _____

Քրեակատարողական ծառայողի Ա.Ա.Հ_____

Կալանավորված անձի կամ դատապարտյալի Ա.Ա.Հ (ում համար կատարվում է թարգմանությունը)

_____

Թարգմանչական ծառայություններ մատուցած ընկերության

անվանումը_____

Թարգմանություն իրականացնողի (թարգմանիչի) Ա.Ա.Հ

_____

Թարգմանիչ հրավիրելու հայտի ամսաթիվը «____» «_____» 20 թ.

Բանավոր թարգմանություն

_____

(թարգմանված լեզվի անվանումը)

Թարգմանության սկիզբ (ամսաթիվ, ժամ /24ժ) _____

Թարգմանության ավարտ (ամսաթիվ, ժամ /24ժ) _____

Տևողություն՝ _____ ժամ

Գրավոր թարգմանություն

Նիշերի քանակ_____

Էջերի քանակ_____

Քրեակատարողական ծառայող

_____
Ստորագրություն

Թարգմանիչ

_____
Ստորագրություն

Կ.Տ.

Հավելված 3
« 04 » « 12 » 2023 թ. կնքված
Թիվ ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԹԾՁԲ-24/1-1 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
Գտնվելու վայրը՝	Գտնվելու վայրը՝
Հ/Հ _____	Հ/Հ _____
ՀՎՀՀ_____	ՀՎՀՀ_____

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՄԱՏՈՒՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«____» «_____» 20 թ.

Քրեակատարողական հիմնարկի
անվանումը՝_____
Արձանագրությունը ներկայացնողի (քրեակատարողական հիմնարկի պետի)
Ա.Ա.Հ_____

Պատվիրատուն՝ և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. դուրս գրված N հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

N	Մատուցված ծառայությունների					
	Կալանավորված անձի կամ դատապարտյալի Ա.Ա.Հ (ում համար կատարվում է թարգմանությունը)	ծառայության անվանումը	քանակական ցուցանիշը	կատարման ժամկետը	միավորի արժեքը համաձայն պայմանագրի	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)
			Ծառայությունների մատուցման ժամերի թիվը (եթե ծառայությունները մատուցվել են մի քանի օրում, ապա ժամերի թիվը նշվում է ըստ օրերի), թարգմանված էջերի կամ նիշերի թիվը	Ծառայությունների մատուցման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը (ամսաթվերը, եթե ծառայությունները մատուցվել են մի քանի օրում)		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ հավաստագրերը և բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն Արձանագրության բաղկացուցիչ մասը:

Ծառայությունը հանձնեց	**Ծառայությունն ընդունեց**
_____	_____
Ստորագրություն	Ստորագրություն
_____	_____
Անուն, ազգանուն	Անուն, ազգանուն
Կ.Տ.	Կ.Տ.